ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
30.01.2019
Վարկային խորհրդատուների (միջնորդների) վերաբերյալ

Վերջին շրջանում ԶԼՄ-երով, սոցիալական ցանցերով, պաստառների միջոցով ագրեսիվ կերպով գովազդվում են «Վարկեր», որոնք, համաձայն Կենտրոնական բանկի ուսումնասիրությունների, որպես կանոն՝ առաջարկվում են, այսպես կոչված, վարկային խորհրդատուների (միջնորդների) կողմից:

Այս կապակցությամբ, կարևորելով ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությունը՝ Կենտրոնական բանկը տեղեկացնում է.

1. Նման կազմակերպությունները (անհատները) իրենց «ծառայությունների» համար գանձում են **շատ բարձր միջնորդավճարներ**, տրամադրում են **խեղաթյուրված խորհրդատվություն** և շատ հաճախ չեն մատուցում խոստացված ծառայությունը, նրանց հայտնի են դառնում վարկառուի **անձնական տվյալները**: Վարկառուի համար շահեկան է անմիջապես և ինքնուրույն դիմել վարկ տրամադրող կազմակերպություններին:
2. ՀՀ-ում վարկեր կարող են տրամադրել և դրանց տրամադրման առաջարկով հանդես գալ միայն ԿԲ կողմից **լիցենզավորված** բանկերը, վարկային կազմակերպությունները և գրավատները:
3. ԿԲ կողմից լիցենզավորված վարկ տրամադրող կազմակերպությունները ներկայացված են Հայաստանի ամբողջ տարածքում և իրենց **մասնաճյուղային ցանցի** միջոցով հնարավորություն են տալիս ստանալ վարկ՝ առաջարկվող պահանջներին բավարարման դեպքում: Բազմաթիվ վարկատու կազմակերպություններ առաջարկում են նաև **«օն-լայն» վարկեր**:
4. Դիմելով **անմիջապես** լիցենզավորված կազմակերպություններին, հնարավոր է խուսափել խարդախությունների զոհ դառնալուց, ստանալ պահանջներին բավարարող ծառայություններ, լիարժեք տեղեկատվություն վարկի, վարկառուի իրավունքների և պարտականությունների մասին:
5. Վարկի տեսակների, դրանց տրամադրման գործընթացների, տոկոսադրույքների, դրանց տեսակների մասին տեղեկանալու և այլ **օգտակար խորհուրդներ** ստանալու նպատակով կարելի է այցելել ԿԲ-ի **www.abcfinance.am** կայք:
6. Վարկ տրամադրող կազմակերպությունների **ցանկին** կարելի է ծանոթանալ ԿԲ պաշտոնական կայքից՝ **www.cba.am:**
7. Վերջիններիս կողմից առաջարկվող վարկերի պայմանները կարող եք **համեմատել**՝ այցելելով **www.fininfo.am** ֆինանսական տեղեկատու համակարգ:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ Կենտրոնական բանկը հորդորում է **զերծ մնալ** նմանատիպ կազմակերպությունների (անհատների) կողմից մատուցվող ծառայություններից և վարկեր ստանալու համար դիմել միայն **լիցենզավորված, օրինական գործունեություն իրականացնող կազմակերպություններին**, իսկ տուժած սպառողներին՝ անհապաղ դիմել իրավապահ մարմիններին:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ/ֆաքս. 56 37 61
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am